



Քննական հարցարան

7-րդ դասարան (մայրենի)

Ազգանուն, անուն-----

Դասարան-----դպրոց-----

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը (5 -0,5):

Փիղը աշխարհում ամենախաղաղասեր կեն-անիւն է: Նա սնվում է միայն բուսական կերով, եր-եք ուրիշ կեն-անու վրա չի հար-ակվում: Եթե իր ճանապարհին փոքր ու անպաշտպան որև- կեն-անու է հանդիպում, կն-իթով զգույշ վերցնում է այդ կեն-անուն, դնում մի կողմ և շարունակում իր ճանապարհը: Մուկ հանդիպելիս ան-ամ նա փոխում է իր ու-իւն: Փիղը մկից չի վախենում, պարզապես նա խաղաղասեր ու մեծահո-ի կեն-անի է:

Մի ան-ամ հռչակավոր հայ ճանապարհորդ Մարկոս-Կիրակոսը անցնում էր Աֆրիկայի շուկալիներով: Նա լսում է փղի զարհուրելի փռնգոց. ըստ երևույթին փիղը վիրավոր էր: Ճանապարհորդը գիտեր, որ վիրավոր փիղը շատ վտանգավոր է: Բայց նաև չէր կարող անտարբեր լինել. փիղը օ-նություն էր աղերսում:

Մարկոս-Կիրակոսը մի քիչ էլ է գնում և տեսնում՝ մի հսկայական փիղ երեք ոտքի վրա կանգնել է բացատում, իսկ մյուս ոտքի մեջ խրված է փայտե մի մեծ սեպ: Վիրավոր ոտքից արյունը առվակներով հոսում է ու ներկում խոտը: Տեսարանից ճանապարհորդի սիրտը լցվում է:

Ի՞նչ անել: Մոտենա՞լ: Գուցե փիղը չհասկանա մար-ու մտադրությունը և վնասի նրան: Սակայն անվախ ճանապարհորդը կամացուկ մոտ է գնում, շոյում փղի ականջները և զգուշորեն հանում փայտե սեպը: Ապա մի սրվակ յոդ է լցնում վերքի վրա և արյունահոսությունը դա-արեցնում:

Հանգստացած փիղը կն-իթով շոյում է բարի ճանապարհորդի գլուխը, և նրանք բաժանվում են:

2.Տեքստից գտի՛ր հետևյալ բառերի հոմանիշները(3 -0,5):

- Երկյուղել-
- Վեհանձն-
- Անվանի-

